Մեռեալքն որ են 'ի հող տապան, յարիւամ լան զՀերիսայն,
Ցնծան հոգիքն եւ զուարճանան եւ Արարչին մեր փառս տան։
Ի թուականին հազար ամի, եւ 'ի յամսեանն Փետրվարի,
Որում օրն էր հինգ համարի, յոր զՀերիսայն իմ գովեցի։
Բայց ես զարիպս Թոխատցի, Մինաս անուն մեղայ որդի,
Եկեալ անկայ քաղաքն Յիլով, կարօտ մնացի Հերիսայի։
Ծեր եմ ալեօքս սպիտակ, ակռայ չկայ, բերանս դարտակ,
Ամիս, Հերիսայն գայր ինձ տաք տաք, կակուղ փիտէներ ու կարագ։
Երգս գրած է Մինասի, անմիտ յիմար եւ փանաքի,
Զեզ արմազան ընծայեցի, որ զմեզ յիշէք սիրով սրտի։
Եւ որ ասէ մեզ ողորմի, բիւրապատիկ իւրեան տացի,
Արժանացայ Հերիսայի, եւ մատուցման պատարագի։
Հայր Դէր ՝ր Յեղիշա՝ ով որ ասէ, ուղիղ սրտով եւ գլուխ յիշէ,
Նա ինքն զնկայ ձայնն լսէ, յաջակողմեան դասն դասէ։

ԼՈՑՍ

ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄՍԵԱՑ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ

Այն վերնագրով նոր պարբերական մի սկսուած է հրատարակիլ 'ի Պոլիս Խմբագրու թեամբ 'Ի մաքսեան Հմայեակ Ծ. վարդապետի։ Ազգային պարբերական թերթերու բազմանալն գրասիրական յառաջադիմութեան նշան պիտի համարէինք, եթէ անընդհատ չը լսէինք արդէն իսկ եղած խմբագրութեանց կողմէն արբուանջներ և վիճաբանական ազգարարութիւններ բաժանորդաց սակաւութեան մասին։ Այս բաժանորդական սակաւութիւնն եւս պարբերականաց թերութեան եւ միօրինակութեանն պիտի վերագրէինք, առանց ազգային անընթերցասիրութենէն կամ անուսումնասիրութենէն գանգատելու, եթէ Աղթ-Ելեան Մամլոյ նման եղական հանդէսներ եւս անքաջալեր վիճակի մէջ չը տեսնէինք և շատ թերթերու սկզբնաւորութիւնն, կարճատեւ շարունակութիւնն և դադարումն մեզ ծանօթ չը լինէր։ Շատ սակաւաթիւ թերթեր կան մեր Ազգին մէջ, որ երկարատեւ կեանք ունին և այն եւս անշուշտ կամ խմբագրութեանց զանհոգութեամբ կամ բաժանորդաց անընտրողութեամբ։ Հետեւապէս, որ կողմէն որ նկատողութեան առնունք, մխիթարական չունք գտնէր մեր ազգային պարբերական հրատարակութեանց վիճակն։

Այսպիսի մի անմխիթար եւ տխուր ժամանակի մէջ ԼՈՑՍՆ կրկին հրատարակիլ փայլուն անուամբ եւ գեղեցիկ նշանաբանիւ։ Ուրախ եմք մեք այն նոր հրատարակութեան հաստատ և իւր անունն ու նպատակն իսկ մեր սիրտն կը լնու յուսով շահաւորութեան։ Բայց խմբագրութիւնն

digitised by A.R.A.R.@

իւր բուն վեհմութեան մէջ ըմբռնելով և լուսոյ տարածման կարեւորութիւնն զգալով՝ արդէն կը համարիմք, փոխանակ գովեստներ կարդալու մեր փորձառեալ եղբայր խմբագրին, արթնութեան և արիութեան հրաւէր կարդալ, զոր կը յուսամք թէ կընդունի իբրեւ յայտարար մեր անկեղծ բարեկամութեան ։

Երբ խմբագիր մի կամ մատենագիր յանուն լուսոյ հրապարակ կ'իջնէ՝ մեծ արթնութեան պէտք ունի, որ մի գուցէ յանուն լուսոյ խաւար տարածէ, ինչպէս ցաւ 'ի սիրտ կը տեսնենք, որ շատերն յանուն ճշմարտութեան և բարոյախօսութեան յառաջաբեղ մատնելով մոլորութիւններ կը սփռեն պարզամիտ և անփորձ ժողովրդեան մէջ ։

Այո, լուսաւորութիւն, որչափ մեծախորհուրդ, որչափ գեղեցիկ եւ սրտագրաւ բառեր ։ Ո՛վ կայ աշխարհի մէջ, որ յանուն լուսոյ չը խայտայ և լոյս չը սիրէ թէ՛ լոկ ֆիզիքականին և թէ՛ լոկ բարոյականին ։ Ո՞վ կայ, որ կոյր մի պեանէ և չը կարենայ ու ցաւակցի ֆիզիքական աշխարհի տասուածապարգեւ և համատարած լուսոյ տեսութենէն զրկուած լինելուն համար ։ Ո՞ր լուսաւոր եւ լուսամիտ մարդն է, որ իւր նմաններն, իւր եղբայրներն տեսնէ բանական և քրիստոնէական լուսոյ փայլմունքէն զըրկուած և խոր հառաչանք մի չը հանէ իւր սրտէն եւ կամ քանի մի կաթիլ արտասուք չը քամէ իւր աչքերէն ։ Բայց այս ամենն զգալով հանդերձ՝ զարմեալ որչափ զգուշաւոր է այն բժիշկներու ձեռնարկն, որոնք տեսութիւն չունեցող աչքերուն տեսութիւն պարգեւել կը ցանկան. որչափ ծանր է այն լուսոյ քարոզչաց պաշտօնըն, որոնք կրենց ունեցած լոյս կը փոքրին կրենց եղբարց, կրենց նմանեաց հաղորդել ։ Այո, լոյս կը գտնեն մարդիկ աշխարհիս վերայ. բայց մենք կը տեսնենք, որ խաւարն խոյս չը փարատիր, այլ լուսոյ տարածման հետ խաւարն եւս իւր յառաջադիմութիւնն ունի ։ Կը յառաջէ լոյս, կը յառաջէ և խաւարն զանազան դիմակներ եւ պատրուակներ զգենլով ։ Կարճ ասենք, խաւարն շատ անգամ լուսոյ հագուստով կը ներկայանայ եւ մարդիկ երեւութէն խաբուելով փոխանակ լուսոյ՝ խաւար կը գրկեն ։ Քանի՞ քանի՞ խաւարային դրութիւններ և մոլորութիւններ յանուն լուսոյ մուտ կը գտնեն հասարակութեան մէջ եւ մեծագնի կը վաճառուին ժողովրդեան ։ Եթէ կարօղ և խորագնին աչօք նայիմք, ամենեբեւ կը տեսնենք, որ շատ անգամ յանուն լուսոյ՝ խաւար, յանուն ճշմարտութեան՝ ստութիւն, յանուն արդարութեան՝ անիրաւութիւն և յանուն բարոյականի՝ անբարոյականութիւն կը տիրուի և կը սերմանուի մեր ժողովրդեան մէջ ։ Շատերն կ'աղաղակեն, որ ճշմարտութեան և արդարութեան նահատակ են. բայց իսկապէս իրենք փաստաբաններ են ստութեան և անիրաւութեան ։

Արդ՝ այսպիսի փափուկ ժամանամէջ ԼՈՒՍՈՅ հրապարակութիւնն իսկապէս շահատակութիւն պէտք է լինի ընդդէմ խաւարի ։ ԼՈՒՍՈՅ խմբագրութիւնն պէտք է ջանայ գրուանի տակ չը դնել իւր վառած ճրագն, այլ 'ի վերայ աշտանակի. պէտք է իւր ընդունած աւետարանական գեղեցիկ նշանաբանին հպատակի, առանց երկբաւոր ազդեցութեան հպատակելու և իւր համոզումներն ծածկելու ։ Այս ճանապարհաւ միայն լուսաւոր կը լինի իւր Լոյսն և մարդիկ տեսնելով և

digitised by A.R.A.R.@

վայելելով զայն՝ կը փառաւորուին գլ. ՅԱ-ՍԸՆ յաւիտենական, որ յերկինս է։

Այն ըղձիւ կը շնորհաւորեմ ա-հա ԼՈՒՍՈՑ հրատարակութիւնն և այն ուղղութեամբ կը մաղթենք իրեն յաջողութիւն և յարատեւութիւն։

ԱՍՏՈՒԱԾ

(Ն-ԻՆ ՖԻԼՈՖՈՐԻԱՆ ԽՐԱՏԱԿՈՅ)։

(Հարունակութիւն և վերջ, տես թիւ Ը։)

Կը պատմուի թէ Մեծն Աղեքսանդր, իւր մանկութենէն ի վեր խիստ մեծ շքեղութիւն կը տար աստուածոց պաշտման. օր մի երբ նա զահ մատուցանելու ատեն ափ մի լի խունկ դրած էր կրակարանի մէջ. «Ա յ եղբայրակա՛ շռայլաբար պիտի վառնէք գուք զայն, առաց իւր Լէոնիդաս կառավարիչն, երբ դրաւէք այն երկիրն որ յառաջ կը բերէ այնպիսի բեւեռներ։ Պէտք է որ այն ատեն ամենայն խնայողութեամբ զոծածէք ինչ որ ունիք. «Ցետ այնորիկ, երբ Աղեքսանդր նուաճեց Արաբիան, ուր խնկենին յառաջ կը գայ, Լէոնիդասի տուած խրատն յիշելով, զրկեց անոր շատ մը խնկենիներ, և յորդորեց՝ որ սակաւ խնայող լինի աստուածոց պաշտման մէջ։

Երբ Պիտաանհաւատ անձանց ուղեկցութեամբ կը նաւարկէր, նաւն մը բրբկի հանդիպելով անհաւատներն ընկրան զաստուածներն յօգնութիւն կանչել. «Լռութիւն պահեցէք, ասաց անոնց Պիտա, որպէս զի աստուածներն չիմանան թէ դուք հոս էք»։ Դարձեալ երբ անհաւատին մէկը հարցուց այն իմաստունին թէ ինչ է բարեպաշտութիւն, ամենևին չ'պատասխանեց. և երբ իր լռութեան պատճառն հարցուց. «Որովհետև, ասաց նա, քու հարցումներդ այնպիսի փաստերու վերայ կոչացած են, որոց դու չես բաւական խելամուտ լինել»։

Աստուածութեան նուիրելուիք առաջին պաշտամունքն է հաւատալ Նորա գոյութեան. ապա՝ ճանաչել որ նա ինքն է պաշտպան և Նախախնամող մարդկան, առանց զոք անտես առնելոյ։ Ով որ կ'ուզէ արժանի լինիլ Նորա շնորհաց, պարտաւոր է բարի մարդ լինել. ով որ կամի նմանիլ Աստուծոյ պէտք է յարգել զայն լաւ արժանաւոր։ Ուրեմն արդարութեամբ, իմաստութեամբ և արքութեամբ կարող է որ շահիլ այն նմանութիւնն։

Հոգւոյ անեղծութիւնն ինչպէս և ամէն մեծամեծ գործքեր, Աստուծոյ են, առանց Նորա չէք արդար ոգի։ Առաքինութիւնը ոչ բնութեան պարգեւ է և ոչ դասատիրակութեան, այլ նա կը գայ Աստուծմէ։ Ո՛չ, բնութիւնը չէ զայն մեզ պարգեւողը. Հրաշք մարիա է որ մենք կը ծնանիմք առաքինութեան համար, այլ ոչ առաքինութեամբ։

Չ'կայ բարի մէկը, որ իւր բարութիւնն պարտական չլինի Աստուծոյ։ Ո՞վ կարող է, առանց աստուածային օգնականութեան, ազատ լինիլ պատահարներէ։ Աստուած ինքն է, որ կը ներշնչէ մեզ ազնիւ և առաքինի խորհուրդներ։ Նա կը բնակի սրտերու մէջ։ Ո՞վ չ'զարմանար երբ տեսնէ այնպիսի անձեր, որ ոչ վտանգներէ կ'երկնչի, ոչ իւր կրից գերի կը լայ և ոչ ձախողանաց մէջ երջանկութիւնէ կը զրկուի, այլ մարդկային ամէն ինչ իւր տակն առած է։ Ո՞չ ապաքէն պիտի ըսենք այն ատեն. «Թէ ամէն առաքինութիւն այս փոքրիկ հակին վերայ կը տեսնուի, ուրեմն առ-

digitised by A.R.A.R.@